

Դ. Որում արթնամիտ խորհրդականությամբ ուշադրեալ այսմ ամենայնի մտաւոր եւ քաջ այրն Վահան տերն Մամիկոնէից, զաւրավարն Զայոց եւ մարգպանն, որ բազում եւ անհամար ուղղութեանց աշխարհիս Զայոց ի ժամանակս իշխանութեան իւրոյ եղեւ արարող, անձամբ եւ զայլս յորդորելով զբազումս: 2 Սա որպէս եւ այլ ամենայն բարւոյ իրաւք հոգացեալ զՅայաստան աշխարհի իրս՝ առաւել եւս զայս ի դէպ եւ պատշաճ համարեցաւ. ի մնացեալ տեղոյ պատմութեան Երկրորդ գրոցն աճեցուցանել յառաջ եւ գրել յայնմիտե զեղեալս յաշխարհիս Զայոց: 3 Բազում զգուշութեամբ գրել եւ կարգել մի ըստ միոջե զամենայն զհոգեւորացն զառաքինութիւնս եւ զարանց քաջաց զլաւութիւնս: 4 Որպէս զի զհոգեւորացն զբարի վարսն լուեալ բազմութեան ժողովրդոցն՝ նմանողք լինել ցանկասցին մարդիկ ճգնութեանց նոցա, եւ քաջքն լսելով զայլոց զգործսն յառաջագոյն քաջացելոցն՝ յաւելեալ յանձանց քաջութիւն՝ անուանի յիշատակ թողցեն զկնի իւրեանց՝ անձանց եւ ազգի: 5 Իսկ ծոյլքն եւ վատքն հայելով յանձինս եւ լսելով զայլոց զպարսաւանս՝ ի բարի նախանձն կրթեալք ջանասցին լաւանալ:

6 Ըստ այսմ աւրինակի զգուշացեալ ստիպեցուցանէ զմեզ տերն Մամիկոնէից Վահան, զաւրավարն Զայոց եւ մարգպան. որոյ հասեալ հրաման առ իս Ղազար Փարպեցի. որ եւ սնեալ եւ ուսեալ առ ոտս առաքինակրան երանելոյն Աղանայ, որ էր ազգաւ ի հոյակապ եւ յականաւոր տոհմէն Արծրունեաց, որդի Վասակայ, եղբար Տաճատայ եւ Գոտորգի: 7 Որ մինչդեռ էր ի տիս մանկութեանն, եւ այն ինչ դեռ տե՛զ մուրուացն ի վերայ գեղեցկատեսիլ վարդափոթի՞ծ ծնաւտիցն բուսանէր՝ ի բաց ընկեցեալ արհամարհէր զամենայն վայելս անցաւոր² կենցաղոյս, եւ զերկնաթռիչ զճանապարհէն³ յաւիտենից բարութեանցն ընտրեալ հետեւիւր, կեցեալ յանապատս ընդ արս ընտիրս ի ճգնութիւնս⁴ մեծամեծս: 8 Չորոյ եւ ոչ բաւական ոք է բանիւ բովանդակել զանբաւ վարուցն զառն նահատակութիւնն. այլ այսքան միայն ասացեալ մնացուցուք զբանս, որպէս թէ պատճառանաւք գոլով ի մարմնի՝ տքնութեամբ եւ պահաւք եւ անդադար աղաւթիւք զցայգ եւ զցերեկ միշտ հոգեւոր անսպառ վաստակաւք զանմարմնոցն զվերին զաւրացն բերեր յանձին զքաղաքավարութիւն. որ ոչ երբեք ի կեանս իւրում ընտրեաց ժամ աղաւթից. այլ զտիւ եւ զգիշեր անհանգիստ նմա ժամ աղաւթից էր, եւ կեցեալ այսպէս, մինչեւ առաւելեալ ծաղկեր հեր գլխոյն սպիտակն քան զխարտէշն, եւ կատարեալ⁵ զընթացս նահատակութեան իւրոյ՝ հանգչէր: 9 Եւ եղեալ ի

1 ՏՏ. չիք յաւելեալ յանձանց քաջութիւն

2 ՏՏ. չիք անցաւոր

3 Թերեւս՝ զճանապարհն (Ն. Բ.)

4 ՁԱտ. եւ ճգնութիւնս

5 Ձ. քան զխարտէշն կատարեալ